№ 29 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 8 — 1903 — ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 29

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովհաննէս Մէլիքեան, Թեկղի և Կարապետ Գասպարեանները յայտնում են, որ առաջինների մօր, իսկ վերջինի զոքանչ

ԱՆՆԱ ՄԷԼԻՔԵԱՆԻ

մահվան քառասունքի օրը, կիրակի, փետրվարի 9-ին, Ջիդրաչէնի եկեղեցում տեղի կունենայ հոգեհանդիստ, ուստի և խնդրում են ծանօթներին և ազգականներին իրանց ներկայութեամբ պատուել հանգուցեալի յիշատակը։ Պատարագն սկսվելու է ժամի 10½-ին, իսկ հոգեհանգիստը—12-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները. Նամակ Գանձակից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աբիսինիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԾԱՆՈՒՑԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի վէճի շուրջը.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ահա մի տարի է, որ Եւրոպական քաղաքական մամուլի մէջ լսվում են ձայներ դումարելու միջազգային մի խորհրդակցութիւն, մի կոնֆերենցիա՝ քննելու այն խնդիրները, որոնք մինչև այժմ գործնականապէս բաւարար լուծում չեն ստացել, թէև նրանց վերաբերութեամբ գոյութիւն ունեն դաշնագիրներ և հանդիսաւոր կերպով արած խոստումներ։ Այդ խնդիրների մէջ առաջնակարգ տեղ են բռնում Մերձաւոր Արևելքին վերաբերեալ խնդիրները, որոնք ոչ միայն դրական լուծում չեն ստացել, այլ և աւելի բարդ ու սպառնալի դիրք են ընդունել, որ առիթ է սպասում ծանր ընդհարումների և արհաւիրքների պատճառ դառնալու։

Կոնֆերենցիա հրաւիրելու միտքը լաւ է, և պետութիւնները նորից պարտաւոր են իրանց հեղինակութեամբ յիշեցնելու դաշնագիրների կատարման անհրաժեշտութիւնը։ Սակայն կոնֆերենցիայի աշխատանքները գործնական և արդիւնաւէտ դարձնելու համար կարևոր է, որ պետութիւնները նախօրօք որոշած և վճռած լինեն, թէ ինչ միջոցներով պէտք է նրանք ապահովեն իրանց վճիռների կատարումը։ Եթէ կոնֆերենցիան կը լինի միայն կարծիքների փոխանակութեան մի ատեան և համար ցանկալի չէ պարտաւորութիւններ և խոստումներ կատարելը։

Արդեօք կոնֆերենցիան ընդունակ կը լինի՞ գործնական միջոցներ մշակել իր որոշումները կատար ածելու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

Հինգշաբթի, փետրվարի 6-ին, հայոց դրամատիկական խումբը տիկին Սիրանոյշի օգտին ներկայացրեց Հօխֆելդի «Կնոջ պայքար» դրամն հինգ գործողութեամբ։

«Կնոջ պայքար» պիեսը նուիրված է կանանց հարցին, կանանց իրաւունքների պաշտպանութեան։ Նա պատկանում է այն պիեսների շարքին, որոնք չունեն գեղարուեստական արժանիքներ և պահպանում են գոյութիւն բեմի վրա չնորհիւ նրանց մէջ արծարծված գաղափարների։ Պիեսը լիքն է զրոյցներով, վէճերով և դատողութիւններով։ Նա կրում է քարոզի, պրոպագանդայի բնաւորութիւն և նպատակ ունի դրամատիկական լուսաբանութեամբ ժողովրդականացնել մի որոշ միտք։ Պիեսի հեղինակը անկասկած ունեցել է և գեղարուեստական նպատակներ, բայց նրան չէ աջողվել իր մտադրութիւնը աջողութեամբ կատար ածել։

Հասարակութիւնը այդ օրը տրամադիր էր տեսնել Սիրանոյշին այնպիսի մի պիեսում, ուր նա փայլեցնէր իր դրամատիկական տաղանդը, արտայայտէր խոր հոգեկան յուզմունքներ և հանդէս բերէր տարերային բուռն և ուժեղ գործողութիւններ։ Պիեսի կողմից հասարակութիւնը զգում էր իրան հիասթափված։ Բայց տիկին Սիրանոյշ ուրիշ կերպ էր գտել։ Նա ինքը մի կին է, որ նուիրել է իրան արուեստին և կնոջ ազատ աշխատանքին, ուստի և իր բենեֆիսի օրը նա ցանկացել էր բեմ դնել մի պիես, որ պաշտպանում է կնոջ իրաւունքի, անկախ դիրքի և ազատ աշխատանքի գաղափարները։

Եթէ պիեսի վրա չը նայենք դրամատիկական արհեստի խիստ պահանջներով, այլ միայն այն տենդենցիայի տեսակէտով, որ ունեցել է հեղինակը՝ կարող ենք ասել, որ նա բաւականաչափ նիւթ է տալիս մտածելու կանանց կրթութեան և դրութեան վերաբերեալ մի քանի էական խնդիրների մասին։

Բեմի վրա ներկայացված էր մի ընտանիք, որ ճոխ և բարեկեցիկ վիճակից անցնում է աղքատ դրութեան։ Ընտանիքի հայրը, դաղտնի խորհրդական Բրայտէնֆելդ (Յարութիւնեան), որ պատուաւոր դիրք ունի հասարակութեան մէջ, տուել է իր զաւակներին այն կրթութիւնը, որ ընդունված է նրա շրջանում։ Իր երկու որդիներին նա տուել է կրթութիւն, որպէսզի ապագայում նրանք կարող լինեն որևէ պաշտօն և դիրք ստանձնելու, իսկ երեք աղջիկներին տուել է արիստոկրատական դաստիարակութիւն, սովորեցնելով նրանց երաժշտութիւն և լեզուներ։ Երբ հայրը կտրուած է լինում և մեռնում, ընտանիքը մնալով առանց նիւթական միջոցների՝ ընկնում է թշուառ դրութեան մէջ։ Մեծ քոյրը (տ. Սիրանոյշ), իբրև աւելի փորձված, խելացի և ինքնուրոյն անձ, տանում է քաջալաբար կեանքի զրկանքները և քաջալերում քոյրերին չընկճվել փորձութիւններից։ Երկրորդ քոյրը (տիկին Արաքսեան) հաշտվում է վիճակի հետ, բայց չափազանց ծանր աշխատանքից ուժասպառ լինում և մեռնում։ Փոքր քոյրը (տիկին Մայսուրեան), որ դեռ մանկութիւնից նոր է անցել մեծ հասակի և որը դեռ գտնվում է հայրական տան փաղաքշանքների ազդեցութեան տակ՝ չէ կարողանում յարմարվել կեանքին և մարդկանց խիստ պահանջներին, այդ պատճառով նա չափազանց խիստ և ջղային կերպով է ընդունում կեանքի ամէն մի ձախորդութիւն և անաջողութիւն։ Նրանց մեծ եղբայրը (Պետրոսեան), որ փեսայացել է մի հարուստ մարդու, ամօթ է համարում շարունակել իր ազգակցական կապերը իւրայինների հետ և նրանցից հրաժարվում է։ Միւս եղբայրը (Աբէլեան), որ չէ փչացել հարստութիւնից և անկեղծ սիրում է իր քոյրերին՝ վճռում է նրանց միանալ՝ մաքառելու բոլոր հարուածների դէմ։

Սիրանոյշ իր դերի մէջ ներկայացրեց ինքնուրոյն, պատուաղդաց, խելացի մի օրիորդի տիպ, որից փչում էր վստահութեան, եռանդի և համոզմունքի փրկարար շունչ։ Կեանքի փորձութիւնները ոչ միայն չեն յուսահատեցնում նրան, այլ և սննդում են նրա մէջ մի հաստատ ուխտադրութիւն, այն է առաջ մղել կնոջ անկախութեան և ազատ աշխատանքի գաղափարը։ Սակայն հասարակութիւնը այդ օրը սպասում էր տեսնել Սիրանոյշին ուրիշ դերում, որոնց մէջ նա շատ անգամ հիացրել է իր դրամատիկական չնորհալի խաղով։

Տիկին Մայսուրեան իր դերից ստեղծեց մի շատ կենսական, հետաքրքրական տիպ։ Նրա հոգեկան տանջանքները, նրա երիտասարդական բուռն արտայայտութիւնները, թէ հրճուանքի և թէ փորձութիւնների ժամանակ, դրաւեցին հանդիսականների ուշադրութիւնը խորապէս։ Մանաւանդ ազող էր նա չորրորդ եւ առաջ եկան այդ ծրագիրները։ Պէտք է դէն դնել հին, մեռած դրականութիւնը. պէտք է Մեսրոպի յիշատակը յաւերժացնել մի ժողովրդական գործով։ Տանք մեր նոր հեղինակների գործերը էժան գնով. հրատարակենք ժողովրդական փոքրիկ բրոշիւրներ, տարածենք նրանց գիւղ, ուստ և այլն։

Ես ամենևին չեմ ուզում ասել, թէ հայ պատմագիրների գիտական հրատարակութիւնը մի մեծ պահանջ է ժողովրդական գրականութեան տեսակէտից։ Ապացուցանել որ հայ պատմագիրները մի շատ նեղ շրջանի համար կարող են հետաքրքրութիւն ներկայացնել՝ միևնոյն է թէ ապացուցանել որ 2×2=4։ Նոյն տեսակի ապացուցութիւն կը լինէր՝ եթէ սկսէինք երկար ու բարակ խօսել այն մասին, թէ շատ գեղեցիկ բան է ժողովրդական էֆան գրքեր հրատարակելը։ Եւ այստեղ ես այդ հարցերով չը պիտի զբաղվեմ։

Ինձ համար շատ մեծ հետաքրքրութիւն ունի հետևեալ հանգամանքը։ 1904 թուականը գալիս է. մի տասն ամսից տեսոյ նա կը մտնէ մեր շեմքով։ Իսկ մենք փոխանակ հայոց դրերի յոբելեանի համար իրական, շօշափելի պատրաստութիւններ տեսնելու, դեռ զբաղված ենք լրագրական բանակռիւներով։ Ի՞նչ անենք, հարցնում ենք մենք, մոռանալով որ գլխաւորը, ամենաղլխաւորը դեռ չէ արված։ Ի՞նչ անենք։

Սա հարց չէ, պարոններ. ներկայի հարցը այն պիտի լինի, թէ ինչ կարող ենք տալ, որպէսզի մի բան անենք։ Ունինք միջոցներ, հաւաքվում էք միասին, հասկանում էք որ գործ կատարելու համար մեր ժամանակներում հարկաւոր է փող, և ոչ թէ խօսք։ Ծրագիրներ կազմելը շատ հեշտ է, նոյնիսկ ամենաիրատեսական ծրագիրներ կազմելը, որոնք հիացմունք կարող են պատճառել։ Բայց ինչ միտք ունեն դրանք, եթէ մնալու են թղթի վրա։

Համակրում ենք ամենքս, սիրում ենք ամենքս, ամենալաւ ցանկութիւններով լցված ենք ամենքս։ Մնում է փողը։ Ի՞նչ քիչ բան է պակասում մեզ, պարոններ։ Ցիշեցէք անեկդոտը։ Գերմանական մի թագաւոր այցելում է մի քաղաք։ Ողջոյնի թնդանօթաձգութիւն չէ լինում։ Քաղաքացիները պատգամաւորութիւն են ուղարկում թագաւորի մօտ, որպէսզի բացատրեն, թէ ինչու չեն կարողացել կատարել իրանց պարտականութիւնը.—«Քառասուն և մէկ պատճառ կայ, թագաւոր», ասում են պատգամաւորները։ Եւ թագաւորը պատրաստվում է լսել պատճառների այդ երկար շարքը.—«Առաջին պատճառն այն է,—սկսում են պատգամաւորները,—որ թնդանօթներ չունենք»... Թագաւորը ասում է, որ բաւական է այդ մի պատճառն էլ։ Մնացած քառասունը կարելի է և չը յիշել։

Այսպէս և մենք։ Կը գայ հայոց դրերի մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՎԷՃԻ ՇՈՒՐՋԸ

I

Անցեալ տարի «Մշակի» մէջ պ. Ստ. Մալխասեանց յիշեցրեց հայերին, որ 1904 թուին լրանում է 1500 տարի այն օրից, երբ Մեսրոպը հնարեց հայերէն գրերը։ Պատմական այդ մեծ փաստի յիշատակութիւնը պ. Մալխասեանց այն մտքով չարաւ, որ ցոյց տայ թէ ինքը լաւ գիտէ հայոց պատմութիւնը և մտքում պահած ունի բոլոր թուականները։ Ո՛չ։ Նա ուզում էր, որ մեծ հայի աքանչելի գիւտի այդ մեծ դարադարձը յիշատակվի մի գրական գործով։

Մարդիկ կան, որոնք բաւականանում են լոկ առաջարկութեամբ, լոկ յիշեցնելով։ «Ես գիտեմ, որ գալիս է այս-ինչ նշանաւոր օրը, և առաջարկում եմ յաւերժացնել նրան, իսկ թէ ինչպէս,—այդ իմ բանը չէ, թող վճռեն և գործադրեն ուրիշները»։ Պ. Մալխասեանց այդպէս չարաւ։ Նա հրապարակ եկաւ պատրաստ ծրագրով, որ կազմել էր իր համար։ Փոխանակ ասելու՝ «արէք» նա ասում էր. «ես անում եմ, դուք միայն օգնեցէք»։ Եւ գործնականը, արդարացին դա էր։ 1904 թուականը եօթը տարի ետում չէ. դա եկող տարին է։ Ժամանակը շատ կարճ է մի կարգին գործ կատարելու համար, մանաւանդ նկատի առնելով հայերիս յատկութիւնը—չը շտապել, չը շարժվել, սպասել։

Բայց ինչ դուրս եկաւ պ. Մալխասեանցի առաջարկութիւնից։

Ցայտնի է նրա ծրագիրը.—հրատարակել բոլոր հայ պատմագիրները մատչելի գներով. հրատարակել ոչ թէ արտատպելով գոյութիւն ունեցող տպագրութիւններից, այլ համեմատելով զանազան ձեռագիրների հետ, նկատի ունենալով բանասիրութեան առաջարկած սրբագրութիւնները։ Մի խօսքով—մեր պատմագիրների գիտական հրատարակութիւն։

Ծանր գործ. այնքան ծանր, որ ես, խոստովանում եմ, մինչև այժմ էլ չեմ կարողանում հաւատալ, թէ մեզանում նա գլուխ կը բերվի աջողութեամբ։ Բայց պ. Մալխասեանց խոստանում է գլուխ բերել, և մեզ մնում էր միայն պահանջել նրանից գիտական գործ, քննադատել նրան, ցոյց տալ ուղղութիւն։

Այդպէս չեղաւ։ Պ. Մալխասեանց իր ոյժերը, իր պատրաստութիւնը, իր հմտութիւնն էր առաջ բերել, նուիրում էր այդ գործին։ Նրան ասացին. ոչ, ձեր մասնագիտութիւնը, ձեր հմտութիւնը պէտքական չէ. մենք գիտենք ուրիշ միջոցներ, մենք կառաջարկենք ուրիշ, աւելի գեղեցիկ ծրագիրներ։

Եւ առաջ եկան այդ ծրագիրները։ Պէտք է դէն դնել հին, մեռած դրականութիւնը. պէտք է Մեսրոպի յիշատակը յաւերժացնել մի ժողովրդական գործով։ Տանք մեր նոր հեղինակների գործերը էժան գնով. հրատարակենք ժողովրդական փոքրիկ բրոշիւրներ, տարածենք նրանց գիւղ, ուստ և այլն։

Սա հարց չէ, պարոններ. ներկայի հարցը այն պիտի լինի, թէ ինչ կարող ենք տալ, որպէսզի մի բան անենք։ Ունինք միջոցներ, հաւաքվում էք միասին, հասկանում էք որ գործ կատարելու համար մեր ժամանակներում հարկաւոր է փող, և ոչ թէ խօսք։ Ծրագիրներ կազմելը շատ հեշտ է, նոյնիսկ ամենաիրատեսաւոր ծրագիրներ կազմելը, որոնք հիացմունք կարող են պատճառել։ Բայց ինչ միտք ունեն դրանք, եթէ մնալու են թղթի վրա։

Համակրում ենք ամենքս, սիրում ենք ամենքս, ամենալաւ ցանկութիւններով լցված ենք ամենքս։ Մնում է փողը։ Ի՞նչ քիչ բան է պակասում մեզ, պարոններ։ Ցիշեցէք անեկդոտը։ Գերմանական մի թագաւոր այցելում է մի քաղաք։ Ողջոյնի թնդանօթաձգութիւն չէ լինում։ Քաղաքացիները պատգամաւորութիւն են ուղարկում թագաւորի մօտ, որպէսզի բացատրեն, թէ ինչու չեն կարողացել կատարել իրանց պարտականութիւնը.—«Քառասուն և մէկ պատճառ կայ, թագաւոր», ասում են պատգամաւորները։ Եւ թագաւորը պատրաստվում է լսել պատճառների այդ երկար շարքը.—«Առաջին պատճառն այն է,—սկսում են պատգամաւորները,—որ թնդանօթներ չունենք»... Թագաւորը ասում է, որ բաւական է այդ մի պատճառն էլ։ Մնացած քառասունը կարելի է և չը յիշել։

Այսպէս և մենք։ Կը գայ հայոց դրերի մեծ

գործողութեան մէջ, երբ նա թողնում է հայրական տունը և փախչում բարձր Վալենայի (Մամիկոնեանի) հետ։ Այդտեղ նա ցոյց տուեց հոգեբանական յուզմունքների ճիշտ ըմբռնողութիւն։

Տիկին Արաքսեան սկզբում թոյլ էր իր տիպի մէջ, բայց յետոյ նա մտաւ իր դերի մէջ և գործեց տպաւորութիւն։

Պետրոսեան և Աբէլեան իրանց փոքրիկ դերերում աջող էին և ըմբռնել էին ներկայացրած տիպերը։ Համեմատաբար թոյլ էին Պետրոսեանի աներոջ Պէրկէնի ընտանիքի անդամները։ Աջող էր Գերբերի որդու թէ ծառայի դեր կատարող օրիորդը իր փոքրիկ բայց աշխոյժ դերի մէջ։

Թատրոնը ծայրից ծայր լիքն էր։ Հասարակութիւնը ընդունեց Սիրանոյշին ծափահարութիւններով, ողջոյնի թղթիւններով, մի նուէրով և յետոյ մի չնորհալի ոտանաւոր-ողերգով, որ մատուցեց մի փոքրիկ օրիորդ։

Երկուշաբթի օր, փետրվարի 10-ին, նոյն թատրոնում կը ներկայացնվի Շէքսպիրի «Համլէտ», որի մէջ դանիական իշխանի դերը կը կատարէ տիկին Սիրանոյշ։

Սիրող

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Փետրվարի 4-ին

Աղքատ, չունևոր աղջիկներին հասարակական աջակցութեամբ մարդի տալը շատ տարածված սովորութիւն է մեր քաղաքում։ Տարէց տարի աւելի է ամրապնդվում, աւելի յաճախակի է արտայայտվում բարեգործութեան այդ ձևը, որը սակայն անպայման գովել, միանգամայն մխիթարիչ համարել չէ կարելի։ Շատ դէպքերում նա անբարոյականացուցիչ է, հետևաբար և պախարակելի ու ոչ ցանկալի։ Բարեգործութիւնը այն ժամանակ է միայն գովելի ու արժանի իր անուան, երբ նա անհետացնելով, վերացնելով որևէ չարիք հասարակական կամ անհատական կեանքում՝ չէ գցում, չէ ստորացնում հասարակական բարքերը, ոչ միայն նիւթական, այլ և բարոյական հետևանքներ է ունենում բարերարվածների համար։

Խելացի, լուրջ մտածած բարեգործութիւնը մի տեսակ դեղ է հասարակական օրգանիզմի՝ նրա սոցիալական կազմի մէջ գտնվող վէրքերի վրա դրվող, որը թէև հիմնաւորապէս չէ բուժում նրանց, գոնէ քիչ-շատ մեղմացնում է նրանց, այդ վէրքերի, խոցերի, ցաւերը, ու այդպիսով տանելի դարձնում նրանց։ Իսկ անմիտ, իւրաքանչիւր դէպքում լրջօրէն չը կշռադատված բարեգործութիւնը այդպիսի վէրքերի համար անպէտք, յաճախակի վնասակար դեղ է դառնում ու այդ պատճառով աւելի է բազմացնում ու բորբոսնացնում նրանց, աւելի քայքայում հասարակական վատառողջ օրգանիզմը, յօնքը չոկելու տեղ աչքն էլ հանում է, ու «բարի» անուն կրող գործն այդպիսով աննկատելի կերպով չարիքի կերպարանք է ստանում։

Մեզանում չունևոր աղջիկներին նիւթապէս նպաստելը մարդի գնալու ժամանակ այնպիսի բնաւորութիւն է ստանում յաճախակի, որ ստիպված ենք այդ՝ սկզբունքով բարի, համակրելի գործին չարիքի անուն տալ շատ դէպքերում։ Այդ սովորութիւնը այնչափ տարածվել է, այնքան առօրեայ ու բնական է դարձել սեղացիների աչքում, որ շատ շատերը, ոչ միայն մշակ, այլ և արհեստաւոր ու մանր առևտրական դասակարգից, չեն քաշվում նրա շնորհով իրանց բաները դրստել ու այդպիսով բարեգործութիւնը դարձնել մուրացկանութիւն... Եթէ այդպիսի դէպքերում օգնութիւնը հասցնվի իսկական աղքատներին, որը, անտիրական աղջկերանց՝ աւելորդ է ասել, որ գովել միայն կարելի է գործի նախաձեռնողներին։ Իսկ երբ մի քանի հարիւրներ են ժողովում աղջկայ բաժինքի վրա «նաղդ» դնում, որ նրան անպատճառ մի «լաւ» տղի տան։ երբ այդ «լաւ» աղան բացարձակ յայտնում է, որ նա որոշ գումարի հասնող փողն է ուզում, այլ ոչ թէ աղջկան։ երբ փող ժողովող բարեգործներն աշխատում են անպատճառ փեսացուի համար մի «կարգին մայա», մի չօչափելի դրամագլուխ կազմել,—մենք այդ պախարակել պարտաւոր ենք։ Ամուսնութիւնն այդպիսով նուիրականութեան մի նշոյլ անգամ չը կրելով իր վրա՝ դառնում է ամենակոպիտ, ամենազզրելի առևտուրի պէս մի բան։

Աղջիկ ուզող երիտասարդները չեն քաշվում իրանց գինը որոշել ու գումարը վերադիր պահանջել աղջկայ վրա։ Մինը բացարձակ ասում է, որ եթէ նրա «հաւանած» աղջկայ վրա հինգ հարիւր մանէթ նաղդ փող դնեն՝ աչքերը հուի կալած կուզի նրան։ միւսը երկու հարիւր, երրորդը երեք կամ չորս հարիւր բուբլու պահանջ է յայտարարում։ Սակարկութիւնը կատարվում է բացարձակ ու այն էլ ոչ մրայն փողոցում, դուքանում կամ մէյդանում, այլ, որն ամենազզուելին է, աղջկատիրոջ տանը, անխօս-անլեզու աղջկայ ներկայութեամբ, որը այդ միջոցին թէյ կամ ընթրիք է մատուցանում, կամ նստած փեսացուի դիմաց, աչքերը գետնին յառած, հնարաւորութիւն է տալիս նրան՝ դիտել իր ապագայ ապրանքը... Փեսացուն, չոգկին խփելով, հաշուում, ապացուցանում է, թէ ինչքան «մայա», ինչպիսի գումար է նրան հարկաւոր ամուսնանալուց յետոյ իր գործերը կարգաւորելու, լաւացնելու համար ու միջանկեալ դիտում է խեղճ «ապրանքը»։ Երբ բանը գլուխ չէ գալիս, փողի հարցում համաձայնութիւն չէ կայանում՝ «ապրանք» դիտողը հեռանում է, մի ուրիշ տեղ է փող ու «ապրանք» փնտռում, առաջինին անինչ ծաղրելով ու բամբասելով։ Որպէսզի բանը գլուխ գայ անպատճառ՝ միջնորդները, որոնք դործում իրանց շահն ունեն, սկսում են պահանջած դրամագլուխը ամբողջովին կամ մասամբ ժողովել, նայած աղջկատիրոջ միջոցներին։ Եթէ տղան յայտնի կենսական տեսակէտներից «լաւ» տղայ է հաշուում, այսինքը բազազխանեան ու չէյթան-բազարի կենսագէտ պրօֆէսօրներից լաւ դիպլօմ ունի՝ այն ժամանակ ամեն ճիգ թափում են նրա պահանջները կատարել։ «Էս աղջկանը հարիւր ուզող կայ։ եթէ ուզենք, առանց մի կօպէկի մարդի կը տանք։ բայց ուզում չենք խեղճին օսալ (վատ) տղի տալ։ մեր ասած տղէն լաւ տղայ ա։ ուզում չենք ձեռքից բաց չը թողնել։ էդ պատճառով պէտք ա մի կերպով չորս-հինգ հարիւր մանէթ փող դղենք»,—լսվում է յաճախ ժողովարար միջնորդներից ու բան դրստողներից։ Որովհետև այդ ձևով, ժողովարարութեամբ, փողը տօնը, և մենք հարկադրված կը լինենք պատգամաւոր ուղարկելու նրա մօտ, որ ասէ թէ թնդանօթ չունենք նրան դիմաւորելու համար։

Տուէք միջոցներ, այն ժամանակ կարող էք մարդիկ հաւաքել, քնել ու դատել, թէ ո՞րն է լաւը, ինչ տանք և ինչ թողնենք։ Բայց չէ. մենք ասում ենք, վիճենք ու վիճենք, մինչև որ մեր վիճաբանութիւնները այլ ևս աւելորդ կը լինեն։ Մինթէ այսպէս չէ։

Իւրաքանչիւր մարդ ուզում է իր նոր առաջարկութիւնը հանդէս բերել։ «Մշակի» խմբագրութեան մէջ այսօր էլ ստացվում են յօդուածներ, որոնք ուզում են հաւատացնել, թէ իրանց ասածն է լաւ։ Տպել այդ բոլորը՝ նշանակում է մտքերի ու կարծիքների մի ամբողջ քաոս ստեղծել։ Լաւ է, երբ տարբեր կարծիքներ գալիս են ընդհարվելու մի ժողովում, ուր կայ նախագահ, որ ղեկավարում է վիճաբանութիւնները, կայ հանդիսականների մի մեծ թիւ, որ կարող է այս կամ այն վճիռը տալ իր քուէներով։ Լրագիրը այդպիսի պաշտօն չէ կարող կատարել. ամենաչատը՝ նա կարող է արձանագրել կարծիքների տարբերութիւնը։ Շատ թանգագին են այդ կարծիքները, շատ լաւ կարող են բնորոշել մեր ընթացիկ հայեացքները, մեր տրամադրութիւնը, մեր ձգտումները։ Բայց այս բոպէին, երբ միայն վիճել չէ հարկաւոր, այլ գործ կատարել՝ լրագրական յօդուածները չեն կարող մի կտրուկ, վերջնական վճիռ կայացնել, որպէսզի ընթերցողը մի յայտնի տրամադրութիւն, մի համոզմունք կազմէ ու այնպէս իմանայ իր անելիքը։ Զէ՞ որ եթէ մենք կարողանանք մի բան անել՝ միայն հասարակութեան աջակցութեամբ պիտի անենք։ Իսկ հասարակութիւնը ինչ անէ. ո՞ւմ ծրագրին հաւանութիւն տայ, ո՞ւր կենտրոնացնէ իր հաւաքական օգնութիւնը, որ հնարաւորութիւն պիտի տայ մի գործ գլուխ բերելու։

Ո՛չ։ այսպիսի դէպքերում հարկաւոր է այլ տեսակ կազմակերպութիւն։ Նախ քան ձեր նոր ծրագիրը առաջարկելը՝ մտածեցէք թէ ո՞ւմ էք առաջարկում։ Կայ մէկը, որ իրաւունք համարէ ընդունել կամ մերժել ձեր ասածը։ Եւ արդեօք զուր չենք ամեն օր հանդէս բերում մեր կարծիքները, թէ այսպէս լաւ է, այսպէս վատ։ Արդեօք սա ջուր ծեծել չէ՞։

Կազմակերպութիւն, այո՛, ես այդ հասկանում եմ. թող լինեն մի տեղ ձեռնհաս, վստահութիւն վայելող անձինք, որոնք վճռեն թէ ինչն է լաւը։ Իսկ հասարակութեան հալկաւոր է իմանալ, թէ պէտք է օգնել, պէտք է միջոց տալ այդ ձեռնհաս մարմնի վճիռները իրագործելու։ Ես չեմ ասում, թէ լրագրական յօդուածները, հրապարակով առաջարկվող ծրագիրները աւելորդ են։ Հազա՞ր անգամ ոչ։ Բայց այդ առաջարկութիւնները լսող ու քննող կազմակերպութիւն է հարկաւոր։ Ընթերցող հասարակութիւնը, որ տարածված է Վլադիվոստոկից մինչև Կալիֆորնիա, կարող է մի յայտնի հասկացողութիւն կազմել գործի մասին, այն էլ երկար ժամանակի ընթացքում, այն էլ այն դէպքում՝ եթէ լրագիրը հնարաւորութիւն ունենայ շարունակ զբաղվելու այդ հարցով, տեղ տալու իր էջերում դատողութիւններին ու հերքումներին, ծրագիրներին ու հակածրագիրներին. այսպէս եթէ լինի՝ հասարակութիւնը գործին լաւ տեղեակ կը դառնայ, բայց դարձեալ չէ կարող վճիռ կայացնել, գործադրութեան եղանակը ցոյց տալ։

Կը լինի՞ կազմակերպութիւն։ Թող պատասխանեն այս հարցին, և ես կասեմ՝ կարող կը լինենք արդեօք լաւ-լաւ, ամենքիս ցանկալի գործերով յաւերժացնել մեր մեծ մարդու երախտիքը, այն գործը, որի նման սքանչելի բան չենք ունեցել մեր պատմութեան ընթացքում։

Եւ քանի որ այսօր չը կայ այդ կազմակերպութիւնը և չէ կարելի յուսալ, թէ վաղը մենք անպատճառ կունենանք Նրան՝ ես մի բոպէ չեմ էլ վարանի ասելու, որ այդ դէպքում աւելի լաւ է, որ անհատները անեն այն՝ ինչ կարողանում են, ինչին ընդունակ են համարում իրանց։ Պ. Մալխասեանց խոստանում է դտնվում է, ուստի աղջկայ վրա փող պահանջելն էլ գնալով աւելի ու աւելի սովորական է դառնում ու ստանում է այն ախտի բնաւորութիւնը, որը վաղեմի ժամանակներից գոյութիւն ունի մեր բուրժուա շրջաններում։

Այդ երևոյթը առաւել ևս ցաւալի է այն պատճառով, որ կատարվում է ժողովրդի հասարակ խաւերում, այն շրջանի մէջ, որն իր ընդհանուր բնաղդային բարոյական մակերեւոյթով բարձր է եղել միշտ մեր բուրժուազիայից, և որտեղ առաջ տղամարդը սովորաբար նայում էր կնոջ վրա՝ իբրև տուն-տեղ պահողի, ճրագ-կրակն ու օջաղը վառողի, իբրև աշխատող, լծակից ընկերոջ վրա. իսկ այժմս բուրժուայի պէս նայում է՝ իբրև նրա համար դրամագլուխ բերող, նրան «մայա» տուող «ապրանքի» վրա։ Այդ խաւերում, ինչպէս ամենախուլ գիւղում, աղջիկը մի անխօս արարած է, որին կարելի է դիտել ամենալկոտ կերպով, հարբած «կամպանիի» մէջ դուրս բերել ու մտիկ տալ տեսնելու համար՝ «ձեռքն և ոտը, ըռանգ-ըռուշը, բոյն ու բուսաթը, աչքն ու ունքը տեղն են, թէ ոչ»։ Կանացի արժանաւորութիւնների գլխովցած «էկսպերտները» չեն քաշվում իրանց կարծիքն ու նկատողութիւնները, յաճախ շատ անպատկառ ու լպիրշ, բարձրաձայն յայտնել «էկսպերտիզի» ենթարկվող աղջկայ ներկայութեամբ... Վերջինիս կամքը, նրա ցանկութիւնը իմանալը սովորութիւն չէ. այդ բանը բոլորովին աւելորդ է համարվում։ Երբ տղան նրան հաւանում է՝ նա էլ պարտաւոր է նրան հաւանել, քանի որ ապրանքն է գնողի համար, այլ ոչ թէ գնողն ապրանքի։ Խեղճ աղջկայ դերը ամուսնութեան նախապատրաստական շրջանում շատ ստորացուցիչ է այդպիսով ու անչափ վիրաւորական նրա համար։ Նրա մարդկային արժանաւորութիւնը ու կանացի ընծային ամօթխածութիւնը ամենակոպիտ կերպով ոտնահարվում են։ Դաստիարակիչ, բարոյական դասեր, օրինակներ ժողովրդի ստորին խաւերը բարձր խաւերում չեն տեսնում. կրթվածները նոյնն են անում, ինչ որ անկիրթները, միայն աւելի մեծ ծաւալով ու անհամեմատ նուրբ ձևերով։

Միջին ու հարուստ, բարձր բուրժուա խաւերում կինը, աղջիկը, ազատ է. բայց թէ կին, թէ տղամարդ դարձեալ ազատ չեն իրանց ընտրութիւնների մէջ. ոսկէ հորթը, դրամը, դրամական հարցերը գերակշռում են ամեն ինչ. թէ կին, թէ տղամարդ իրար որսում են. թէ մէկը, թէ միւսը, մարդկային բոլոր տրժանաւորութիւնները մոռացութեան տուած, փոխանակ իրար կրծքում սիրտ ու նրա մէջ մաքուր զգացմունքներ փնտռելու, իրար գրպանում փողի քսակ ու նրա մէջ չողչողուն ոսկիներ են փնտռում միայն, այն զանազանութեամբ առաջիններից, որ այդ ոսկիները հասարակութիւնից չեն հանդանակվում։ Ինտելիգենտ փեսացուն ու հարսնացուն, իբրև կրթված մարդիկ ու ամուսնութեան պէս կենսական մեծ նշանակութիւն ունեցող գործում հրմուտ ու ճարպիկ որսորդներ, գրտեն՝ թէ ծամակի ինչպիսի տեղում է «արջը դան մտած», կամ յայտնի վարազը ինչքան է ճարպակալած. ուստի իրանց նետերը անվրէպ հասցնում են վաղուց աչքադրած նպատակին ու «բազազ-խանեան» երջանկութիւնը վայելում անյագ ու անվերջ, առանց ամօթի ու կարմրելու...

Սա. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Եկատերինոդար, փետրվարի 1-ին

Թոյլ տուէք, ինդրեմ, երկտողով պարզել մի թիւրիմացութիւն։ «Մշակի» № 18-ում Եկատերինոդարից հաղորդված էր մի լուր, որի մէջ նկարագրված է Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առիթով այստեղ յունվարի 19-ին, «մասնաւոր բնակարանում» տեղի ունեցած մի երեկոյթ և, ի միջի այլոց, ասված է հետևեալը. «Մեր երիտասարդ բանաստեղծ պ. Ծատուրեանն էլ կարդաց մի քանի գողտրիկ բանաստեղծութիւններ»։

Պարտք եմ համարում յայտնելու, որ յունվարի 19-ին, իրաւ է, ես այստեղ էի. բայց որ այդ օրն այստեղ այդպիսի մի երեկոյթ է տեղի ունեցել՝ այդ ես, տարաբախտաբար, միայն «Մշակից» իմացայ և հոդով ցաւում եմ, որ մեր խնկելի հրապարակախօսի յիշատակին նուիրած այդ երեկոյթին ես ոչ ներկայ եմ եղել և ոչ էլ բանաստեղծութիւններ կարդալու պատիւն եմ ունեցել։

Եթէ պ. լրատուի խօսքը մի ուրիշ Ծատուրեանի մասին չէ, այն ժամանակ ինձ խորին ցաւ ու զարմանք է պատճառում այն տգեղ երևոյթը, որ երբեմն գտնվում են մեր մէջ մարդիկ, որոնք ի չարն են գործ դնում մամուլի հիւրընկալութիւնը և խմբագրութեան հաւատը։

Ալ. Ծատուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, փետրվարի 7-ին

Խնդրեմ թոյլ տուէք ինձ, իբրև մի պանդուխտ հայի, յայտնել հրապարակով իմ հոգեկան տպաւորութիւնը, որ ես ստացայ հայոց թատրոնում, որ Թիֆլիսի հայկական կեանքի ամենամխիթարական երևոյթներից մէկն է ներկայումս։

Ես ևս եղայ թատրոնում։ Գոհ սրտով հեռացայ գեղարուեստի տաճարէն։ Սիրուն թատրոն, ընտիր հայկական խումբ, փառաւոր երեկոյթ, միանգամայն լի գնահատող պատկառելի վառ հանդիսական։ Կէրցէներու դոռացում զանազան տեսակ համակրանքի ցոյցերով, դէպի հայկական բեմին նուիրեալ Սիրանոյշ դերասանուհին և իրեն միացող քաջ դերասանական խումբը։ Ես ալ իմ կողմից կաւելացուցեմ հրապարակս. կեցցէք Թիֆլիսի գնահատող ազգաւէրը, որ մեր արժանաւոր Սիրանոյշ հայրենակցին անխտիր երջանկացուցիք։ Այս տեսարանը, այս ազգային փառքը, որ 'երկար տարիներէ ի վեր օտարութեան մէջ վայելել զուրկ կապրէի, անչափ ազդեցին ինձ. վերջին ծայր յուզվեցի և արտասուեցի։ Վերջապէս ամբողջ կեանքիս փորձերէն կը հետևցունիմ, թէ գիտութեամբ ինքնօգնութիւն՝ դժուարութեան յաղթող, ու երախտագիտաբար միութիւն՝ անմահութիւն է։

Սոփոն Պէզիրճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փետրվարի 5-ին, երեկոյեան մօտ 7 ժամին, պօստային № 72 գնացքը, որ Կարսից ուղևորվում էր Թիֆլիս, Բաչքեադիկլեար և Կարաեալ կայարանների միջև, խորտակվեց. րէլսերից դուրս ընկան գնացքի բոլոր վագոնները, բացի չոգեմեքենայից և պօստային ու ծանրոցքի վագոններից. բայց բարեբախտաբար տօնը, և մենք հարկադրված կը լինենք պատգամաւոր ուղարկելու նրա մօտ, որ ասէ թէ թնդանօթ չունենք նրան դիմաւորելու համար։

Տուէք միջոցներ, այն ժամանակ կարող էք մարդիկ հաւաքել, քնել ու դատել, թէ ո՞րն է լաւը, ինչ տանք և ինչ թողնենք։ Բայց չէ. մենք ասում ենք, վիճենք ու վիճենք, մինչև որ մեր վիճաբանութիւնները այլ ևս աւելորդ կը լինեն։ Մինթէ այսպէս չէ։

Իւրաքանչիւր մարդ ուզում է իր նոր առաջարկութիւնը հանդէս բերել։ «Մշակի» խմբագրութեան մէջ այսօր էլ ստացվում են յօդուածներ, որոնք ուզում են հաւատացնել, թէ իրանց ասածն է լաւ։ Տպել այդ բոլորը՝ նշանակում է մտքերի ու կարծիքների մի ամբողջ քաոս ստեղծել։ Լաւ է, երբ տարբեր կարծիքներ գալիս են ընդհարվելու մի ժողովում, ուր կայ նախագահ, որ ղեկավարում է վիճաբանութիւնները, կայ հանդիսականների մի մեծ թիւ, որ կարող է այս կամ այն վճիռը տալ իր քուէներով։ Լրագիրը այդպիսի պաշտօն չէ կարող կատարել. ամենաչատը՝ նա կարող է արձանագրել կարծիքների տարբերութիւնը։ Շատ թանգագին են այդ կարծիքները, շատ լաւ կարող են բնորոշել մեր ընթացիկ հայեացքները, մեր տրամադրութիւնը, մեր ձգտումները։ Բայց այս բոպէին, երբ միայն վիճել չէ հարկաւոր, այլ գործ կատարել՝ լրագրական յօդուածները չեն կարող մի կտրուկ, վերջնական վճիռ կայացնել, որպէսզի ընթերցողը մի յայտնի տրամադրութիւն, մի համոզմունք կազմէ ու այնպէս իմանայ իր անելիքը։ Զէ՞ որ եթէ մենք կարողանանք մի բան անել՝ միայն հասարակութեան աջակցութեամբ պիտի անենք։ Իսկ հասարակութիւնը ինչ անէ. ո՞ւմ ծրագրին հաւանութիւն տայ, ո՞ւր կենտրոնացնէ իր հաւաքական օգնութիւնը, որ հնարաւորութիւն պիտի տայ մի գործ գլուխ բերելու։

Ո՛չ։ այսպիսի դէպքերում հարկաւոր է այլ տեսակ կազմակերպութիւն։ Նախ քան ձեր նոր ծրագիրը առաջարկելը՝ մտածեցէք թէ ո՞ւմ էք առաջարկում։ Կայ մէկը, որ իրաւունք համարէ ընդունել կամ մերժել ձեր ասածը։ Եւ արդեօք զուր չենք ամեն օր հանդէս բերում մեր կարծիքները, թէ այսպէս լաւ է, այսպէս վատ։ Արդեօք սա ջուր ծեծել չէ՞։

Կազմակերպութիւն, այո՛, ես այդ հասկանում եմ. թող լինեն մի տեղ ձեռնհաս, վստահութիւն վայելող անձինք, որոնք վճռեն թէ ինչն է լաւը։ Իսկ հասարակութեան հալկաւոր է իմանալ, թէ պէտք է օգնել, պէտք է միջոց տալ այդ ձեռնհաս մարմնի վճիռները իրագործելու։ Ես չեմ ասում, թէ լրագրական յօդուածները, հրապարակով առաջարկվող ծրագիրները աւելորդ են։ Հազա՞ր անգամ ոչ։ Բայց այդ առաջարկութիւնները լսող ու քննող կազմակերպութիւն է հարկաւոր։ Ընթերցող հասարակութիւնը, որ տարածված է Վլադիվոստոկից մինչև Կալիֆորնիա, կարող է մի յայտնի հասկացողութիւն կազմել գործի մասին, այն էլ երկար ժամանակի ընթացքում, այն էլ այն դէպքում՝ եթէ լրագիրը հնարաւորութիւն ունենայ շարունակ զբաղվելու այդ հարցով, տեղ տալու իր էջերում դատողութիւններին ու հերքումներին, ծրագիրներին ու հակածրագիրներին. այսպէս եթէ լինի՝ հասարակութիւնը գործին լաւ տեղեակ կը դառնայ, բայց դարձեալ չէ կարող վճիռ կայացնել, գործադրութեան եղանակը ցոյց տալ։

Կը լինի՞ կազմակերպութիւն։ Թող պատասխանեն այս հարցին, և ես կասեմ՝ կարող կը լինենք արդեօք լաւ-լաւ, ամենքիս ցանկալի գործերով յաւերժացնել մեր մեծ մարդու երախտիքը, այն գործը, որի նման սքանչելի բան չենք ունեցել մեր պատմութեան ընթացքում։

Եւ քանի որ այսօր չը կայ այդ կազմակերպութիւնը և չէ կարելի յուսալ, թէ վաղը մենք անպատճառ կունենանք Նրան՝ ես մի բոպէ չեմ էլ վարանի ասելու, որ այդ դէպքում աւելի լաւ է, որ անհատները անեն այն՝ ինչ կարողանում են, ինչին ընդունակ են համարում իրանց։ Պ. Մալխասեանց խոստանում է անել. եթէ նա կարողանայ՝ այդքանի համար էլ պէտք կը լինի շնորհակալ լինել։ Յամենայն դէպս, աւելի լաւ է տալ Մեսրոպեան տօնին հայ պատմագիրների ժողովածուն, քան ոչինչ չը տալ։ Սա իմ անձնական կարծիքն է։ Ես էլ կը կամենայի, որ ժողովրդական գործի յօբելեանը աւելի մեծ, աւելի լայն յուշարձաններ բերէր մեզ։ Եւ եթէ մենք գոնէ այս անգամ կարողանանք կազմակերպելու շնորհք ցոյց տալ՝ ես ամենայն ուրախութեամբ կառաջարկէի պ. Մալխասեանցին և միւսներին, որ իրանց ծրագիրները տանեն այդ կազմակերպութեան, որ այնտեղ վճռէին թէ ինչ տանք։

Բայց վախում եմ, որ ինչպէս միշտ՝ այնպէս էլ այս անգամ ոչինչ չանենք համախմբվելու, մի բան կարգաւորելու համար, և տօնը գայ անցնէ առանց մի հատ ողջոյնի։

Ողջոյնը պէտք է լինի. եթէ չէք կարողանում մեծ բան անել, այն ժամանակ պէտք է ասէք անհատներին. «գոնէ դուք գործեցէք, տուէք ամեն մէկդ՝ ինչ կարող էք. մէկը մի հատ հատոր, միւսը մի բրօշիւր»...

Ի՞նչ անենք, մեր պատմական ճակատագիրն է անհատներով գործել...

Բայց անհատները ինչ կարող են անել։ Այս մասին ես կը խօսեմ մի այլ անգամ։

Լէօ

մարդիկ չը վնասվեցին։ Գնացքի խորտակման պատճառը յայտնի չէ. նրան պարզելու համար Թիֆլիսից դէպի խորտակման տեղը ճանապարհ ընկաւ մի առանձին մասնաժողով։

—

«Кавказъ» լրագրին գրում են Գանձակից. «Անցեալ յունվար ամսի 22-ին, Արէշի գաւառի սահմանին մօտ, կատարված է հետեւեալ դաղանութիւնը։ Ուղտերի մի կարաւան, կարաւանատէր Յարեթ Յարութիւնեան Զանլաթեանի և Օհան Յարութիւնեան Օհանջանեանի ուղեկցութեամբ, Նուխու գաւառի Նէժ գիւղից ուղևորվում էր Գէօկչայի շուկան։ Ճանապարհին, Արէշի գաւառի սահմանին մօտ, կարաւանատէրերի վրա յարձակվեցին երկու չարագործներ, բռնեցին կարաւանատէրերին և տարան մերձակայ խոր ձորը, որտեղ և ենթարկեցին նրանց զարհուրելի տանջանքների։ Բոլորովին մերկացնելով Օհան Օհանջանեանին՝ այն դաղանները սկսեցին իրանց դերմարդկային տանջանքները. անց կացրին նրա գլուխը խնձորներից չարած մի պսակ, սկսեցին ծիծաղել և տանջել Օհանջանեանին զանազան ձևերով,—կտրատում էին նրա մարմինը ամենամանր կտորներով, պահպանելով կեանքը. վերջում միայն զրկեցին նրան կեանքից և յետոյ նրա մարմնի մասերը հաւաքեցին մի կոյտ, լցրին վրան նաւթ ու այրեցին։ Ջինի պատճառով ամբողջ դիակը չայրվեց։ Միւս կարաւանատիրոջը, Զանլաթեանին, վերոյիշեալ արիւնահեղ տեսարանները ցոյց տալուց յետոյ, սպանեցին առանց տանջելու և գցեցին վայր։ Չարագործութեան տեղում թողնված իրեղէնները, սպանվածների շորերն և փողերը պարզ ցոյց էին տալիս, որ սպանութիւնը կատարված է վրէժխնդրութիւնից դրդված։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներով պարզվեց, որ յիշված ոճրագործութիւնը կատարել են Նիժ գիւղի բնակիչ Մարտիրոս Էյլիեվ և նրա եղբայր Մանուէլը. վրէժառութեան առիթն եղել է այն, որ հնդուցեալ Օհանջանեան համոզել է իր համագիւղացիներին՝ չընտրել Մարտիրոսին գիւղական աւագ նոր եռամեակի համար»։

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ փետրվարի 5-ին, որոշեց չընտրել քաղաքային ուսումնարանական կոմիտէի նոր անդամներ, մինչև որ վերջնականապէս պարզվի այդ կոմիտէի գոյութեան և իրաւունքների հարցը։

—

Մեր խմբագրատունը դիմում են չքաւոր անձինք և դանդաւում են, որ նրանք օգնութիւն չեն ստանում բարեգործական հիմնարկութիւններից։ Ցանկալի է, որ քաղաքի մէջ գոյութիւն ունեցող բարեգործական հաստատութիւնները տեղեկութիւն ժողովէին աղքատ ընտանիքների մասին և նրանց նպաստ հասցնէին։

—

Հարց է բարձրացրած այն մասին, որ իւրաքանչիւր դեղագործ պարտաւորված լինի բժշկի դեղատոմար թարգմանել ռուսերէն և նշանակել թարգմանութիւնը դեղերի հետ տրվող թերթերի վրա։

—

Պետերբուրգի ռուսաց Կայսերական այգեգործական ընկերութիւնը մտադիր է ապրիլի վերջերում և մայիսի սկզբում կազմել այգեգործութեան, պտղաբուծութեան և բանջարաբուծութեան ցուցահանդէս։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարի Կարսի առման 25-ամեակի յոբելեանական հանդէսների մասին «Մշակի» էջերում խօսելիս՝ ի միջի այլոց ցանկութիւն էինք յայտնել, որ այստեղ բացվի մի արհեստաւորաց ուսումնարան։ Այդ մեր և շատերի ցանկութիւնը այսօր իրականացած ենք տեսնում։ Յունվարի 26-ին բացվեց այդ հանրօգուտ ուսումնարանը և կատարվեց օրհնութիւն։ Թէև դեռ վաղուց այդ բանը պիտի գլուխ եկած լինէր, միայն զանազան պատճառներով յետաձգվել էր։ Բաւական թուով աշակերտներ են հաւաքվել. ընդունելութիւնը դեռ շարունակվում է։ Դասավճարը 20 ռուբլի է։ Ոչ պակաս ուրախալի է և այն, որ քաղաքիս մի հատիկ բուժարանը իրան կից բացեց հիւանդների համար չորս մահճակալով մի բաժանմունք և փոքրիկ դեղատուն։ Առաջ բուժարանի մուտքը 20 կոպէկ էր, և հիւանդը իր փողով ուրիշ դեղատներից վերցնում էր դեղերը. իսկ այժմ մուտքի համար վճարում են միայն 30 կոպէկ, իսկ բժիշկ պ. Հայրապետեանի նշանակած դեղերն էլ հէնց այնտեղ ձրիապէս տրվում են հիւանդներին։ Թէ որքան ձեռնտու և յարմար է դա աղքատ աղդաբնակութեան համար՝ արդէն ակներև է։ Ո՞րքան լաւ կը լինէր եթէ մի քիչ էլ քաղաքի մաքրութեան վրա մտածէին»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Համերաշխութիւնը գործի հոգին է—հէնց այդ ճշմարիտ սկզբունքի վրա հիմնված՝ տեղիս քաղաքային դպրոցի տեսուչ Ն. Կիրպիչ՝ սկսեց շփվել տեղիս երիտասարդների հետ և մի կապ հաստատել դպրոցի ու նրանց մէջ։ Նա մի քանիսի հետ ծանօթանալուց յետոյ՝ ցանկութիւն յայտնեց ձրի աւանդել ռուսաց լեզու և այլ կարևոր գիտելիքներ։ Մի քանի օրից յետոյ ցանկացողների մի խումբ կազմվեց յիշեալ նպատակով, և սկսվեց երեկոյեան պարապմունքը դպրոցում, որ կանոնաւոր շարունակվում է։ Ցոյս ունենք, մեզանում նոր սկսված համերաշխութիւնը գնալով լայն շրջան կը ստանայ, որ երիտասարդների համար շատ ցանկալի պէտք է համարվի. որովհետև համերաշխութիւնը, մասնաւորապէս գաւառներում՝ գործի հոգին է և միակ նպաստաւոր բանը հասարակութեան համար։ Վերոյիշեալ խումբը, այդ համերաշխութիւնը գործնականապէս ցոյց տալու համար, ցանկութիւն յայտնեց յարգելի ինսպէկտորին մի ներկայացում տալ յօգուտ վերջինիս հսկողութեան յանձնված դպրոցի աղքատ աշակերտների, և երեկոյեան ուսումնարանի համաձայնութիւնը ստանալուն պէս՝ խումբը պատրաստվեց և ամսիս 2-ին ներկայացրեց Ե. Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ» ամբողջապէս և «Արևելեան ատամնաբոյժի» կատակերգութիւնից՝ միայն առաջին գործողութիւնը։ Արդիւնք ստացվեց 121 ր. 75 կ. ծախք եղաւ մօտաւորապէս 60 ռուբլի. զուտ արդիւնք մնաց 61 ր. 75 կ., որը յանձնվեց պ. տեսչին։ Խորին շնորհակալութիւն օրիորդներ՝ Ա. Տէր-Ռափայէլեանցին և Հ. Ղազարեանցին, որոնց շնորհիւ միայն, կարելի է ասել, աջողվեց ներկայացման գործը. որովհետև, ինչպէս յայտնի է ընթերցողներից շատերին, գաւառներում թատրոնական գործի մէջ առաջին արդելքը հանդիսանում է կանանց դերը, որ շատ դժուարութեամբ են ճանձն առնում կատարել։ Շնորհակալութիւն նաև՝ տեղիս զօրագնդի սպայ՝ յարգելի Նէյվարդին, որը ներկայացման միջոցում անընդհատ զբաղված էր՝ բեմը պատշաճաւոր դիրքի մէջ պահելով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԲԻՍԻՆԻԱՑԻՑ

Զիբուտի, յունվարի 28-ին

Յունվարի 1/14-ին «Սարատով» շոգենաւով այստեղ հասաւ ռուսական դեսպանութիւնը Ադիս-Աբաբայ Մենելիք թագաւորի մօտ գնալու համար։ Հետեւեալ օրը դեսպանը, պ. Լիչնեվ, իրան ընկերակցող երեսունի չափ հետեւորդներով, որոնց թուում կան երեք բժիշկ, զինուորական աստիճանաւորներ և եօթը կօզակ, ցամաք դուրս եկաւ և ընդունված սովորութեան համաձայն, պաշտօնական այցելութիւններ եղան։

Սա առաջին անդամը չէ, որ ռուս կառավարութիւնը դեսպանութիւն է ուղարկում Աբիսինիա։ Իտալո-Հաբէշ պատերազմի վերջերը կռուից վերադարձող հիւանդներին օգնելու համար՝ Կարմիր խաչի ընկերակցութեամբ ռուսական առաջին դեսպանութիւնը ուղարկվեց, որ համարեա միևնոյն կազմն ունէր՝ ինչ որ ներկայ դեսպանութիւնն է, և այն օրից էլ սկիզբ դրվեց ռուսական հիւանդանոցին։ Այս անդամ նոր երեսուն մահճակալ աւելացնվում է։ Առաջին դեսպանը գեներալ Վլասովն էր, որ 1900-ին վերադարձաւ Ռուսաստան դեսպանութեան կազմով՝ Ադիս-Աբաբիայում թողնելով միայն մի գործակալ և երկու բժիշկներ, որոնք և կառավարում էին մինչև այսօր հիւանդանոցը։

Ինչպէս տեսնում էք՝ ռուս կառավարութեան կատարած դերը բարոյական օգնութեան մէջ է կայանում, զերծ որևէ քաղաքական խընդիրներից. և այդպիսի խնդիրներ տեղի ունենալ էլ չեն կարող՝ քանի որ Աբիսինիան ոչ մի սահմանակցութիւն չունի Ռուսաստանի հետ և ոչ էլ առևտրական յարաբերութիւն, և այդ բարոյական օգնութիւնը շատ կարող է նպաստել հաբէշներին՝ հանդէպ միւս եւրոպական պետութիւնների՝ որոնք բոլորովին տարբեր շահեր և քաղաքականութիւն ունեն Աբիսինիայում։ Մի քանի տասնեակ տարիներ առաջ, երբ այս երկիրը, շրջապատված վայրենի ցեղերով, համարեա ոչ մի յարաբերութիւն չունէր եւրոպացիների հետ՝ հաբէշները կարող էին հանդիսաւոր քնել, առանց հոգս ունենալու իրանց երկիրը պաշտպանելու ոտնձգութիւններից. բայց յետոյ, երբ մի կողմից իրանց սահմանները տարածելով աւելի հեռուն՝ ի վնաս իրանց շրջապատող ցեղերին, և միւս կողմից անգլիացիների, իտալացիների և ֆրանսիացիների առաջխաղացումներով դէպի Աբիսինիայի սահմանները, մանաւանդ տնտեսական յարաբերութիւններով, որոնք ամենից աւելի պատճառ են լինում քաղաքականութիւն ստեղծելու, փոխվեց դրութիւնը՝—հաբէշները ստիպվեցան ծանօթանալ ճերմակների դիպլոմատիական աշխարհի հետ, սկսեցին երևան գալ դեսպանութիւններ և դրանց հետ էլ քաղաքական խընդիրներ։ Հաբէշները լաւ հասկացված են, որ իրանց հետ սահմանակցութիւն ունեցող եւրոպական պետութիւնները, որքան էլ անկեղծ և բարեկամ լինեն՝ միշտ յարմար բոպէի են ըսպասում ճիրաններ ցոյց տալու։ Այդպէս էր իտալական կառավարութիւնը, որ ամենից շատ օգնում էր հաբէշներին և ամենից աւելի բարեկամ էր ցոյց տալիս իրան, մինչդեռ պատերազմը վերջապէս ցոյց տուեց, թէ ինչ էր այդ բարեկամութիւնը։

Հիմա էլ հերթը գալիս է ֆրանսիացիներին։ Երկաթուղիի գիծը, որ շինվում է Զիբուտիից դէպի Հարար և Ադիս-Աբաբայ ֆրանսիացիների ձեռքով և որի առիթով վերջերս ֆրանսիական կառավարութիւնը միջամտեց այդ գործում, որոշ իրաւունքներ ձեռք բերելով՝ արդէն առիթ տուեց դժգոհութիւնների, և ոչ ոք կարող է երաշխաւորել, թէ մի օր այդ դժուարութիւնները չը պիտի լուրջ բարդութիւններ առաջ բերեն։

—

Յունվար 4/17-ի երեկոն մի տօն օրվայ բոլոր հրապոյրը ունեցաւ Զիբուտիի բնակիչների համար. այդպիսի երեկոներ հազուագիւտ են այստեղի համար, և եթէ կարողացանք մի քանի ուրախ ժամեր անց կացնել այդ օրը, մոռանալով Զիբուտիի միապաղաղ թախծալի կեանքը՝ դա շնորհիւ ռուս դեսպանութեան, որ մի երեկոյթ կազմակերպեց իր վերջին հրաժեշտը տալու կառավարչական բարձր պաշտօնեաներին։ Մի բախտաւոր զուգադիպութեամբ այդ օրը մեր նաւահանգստում գտնվում էր ռուսական զրահաւոր «Новикъ»-ը և մի ֆրանսիական նաւ, նոյնպէս զրահաւոր։ «Новикъ»-ի զինուորական նուագախումբը՝ մինչև կէս գիշերը նուագում էր այդ երեկոյթին. հանդէսը կատարեալ դարձնելու համար՝ ծովից ֆրանսիական զրահաւորը ելեկտրական ռէֆլէկտորով լոյսի հեղեղներ էր արձակում քաղաքի վրա և արշալոյսի շողերով զարդարում երկնակամարը։ Զմրան այս աքանչելի եղանակին՝ ամեն ինչ կատարեալ էր լոյսի և նուագի հաճոյքը լիովին վայելելու։

«Զմրան աքանչելի եղանակ», այն էլ յունվար ամսին՝ դա, ընթերցող, թերևս անըմբռնելի լինի ձեզ համար։ Այդպիսի ամսվայ մի երեկոյ գիտեմ, թէ որքան դժան է ձեզ մօտ և որպիսի անէծքներ է իր վրա հրաւիրում այդ երեկոն։ Պէտք է բնականն ունենալ՝ այն էլ ամեն կողմից լաւ փակված և տաքացրած. հարկաւոր է տաք կերակուր և հաստ անկողին, որ այդ երեկոն կարելի լինի վստահութեամբ պառկել և քնել՝ հետեւեալ օրը անկողնից կենդանի դուրս գալու համար անկողնից։ Բայց այստեղ ուրիշ բան է. արևը հազիւ թէ մեղմացրած է իր այրող ջերմութիւնը. դեռ կարելի է բաց դռնով և պատուհանով մի թեթև վերմակով ծածկված քնել։

Այս ձմրան ամիսներին միայն անձրևի երեկենք տեսնում, և առաւօտները միայն զով օդի մասին հասկացողութիւն կազմում։ Հիմա միայն կարելի է առանց սառցով պաղեցնելու ջուր խմել։ Ահա այս է բոլորը, որ մեր աքանչելիքներն են կազմում և որոնց գուրգուրանքով ենք մտաբերում ամառնային ամիսներում։

Գ. Արաբեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից գրում են «Indépendance Roumaine» լրագրին, որ իբր թէ Բ. Դուռը պատրաստ է մեծ զիջումներ անել և խնդրեց ռուսաց կառավարութեան աջակցութիւնը Բոլգարիայից վերաբնակեցնելու համար մակեդոնական փախստականներին, խոստանալով դրամական նպաստ տալ և հովանաւորել նրանց։ Կատարելապէս հասկանալով դրութեան ծանրութիւնը՝ սուլթանը հարկադրված է, սակայն, ուշադրութեան առնել թիւրքերի տրամադրութիւնը, որոնք պահանջում են պատերազմ յայտարարել գեռուրների դէմ։ Թիւրքերի մրցքերը շատ զրգռված են մօլլաների և ուլեմների քարոզներով մզկիթներում։

—Բոլգարական լրագիրները հաղորդում են, որ Պէտկո Կարավէլովի յանկարծական մահը ցնցող տպաւորութիւն գործեց ամբողջ Բոլգարիայում։ Թէպէտև հանգուցեալ պետական գործիչի առողջութիւնը խախտված էր դեռ իր բանտարկութեան ժամանակից, երբ նրան տանջում էին Ստամբուլովի դահիճները՝ սակայն բժիշկները յոյս էին կապում նրա ուժեղ կազմուածքի վրա։ Յունվարի սկզբին նա սկսեց հիւանդանալ, բայց հիւանդութիւնը վտանգաւոր չէր։ Հէնց մահվան օրը նա իրան առանձնապէս լաւ էր զգում և մինչև անգամ զբօսանք կատարեց այգում ընթրիքից առաջ։ Ընթրիքից յետոյ Կարավէլով երկար խօսակցեց իր բարեկամների հետ, և 10 ժամին, կատարելապէս թարմ և առողջ, անկողին մտաւ. բայց կէս ժամ չէր անցել, որ նա սաստիկ գլխացաւ զգաց և մի բաժակ չոր պահանջեց։ Մինչև որ կինը ջուրը բերեց՝ Կարավէլով արդէն չը կար. նա մեռաւ տրիւնհոստութիւնից գլխի մէջ։ Այն ժամանակ, երբ Կարավէլովի տանը կատարվում էր այդ դրաման՝ վերջինի բարեկամները, խորհրդակցութեան գումարվելով «Իմպերիալ» հիւրանոցի դահլիճում, վճռեցին մի որոշ գումար հաւաքել իրանց մէջ և առաջարկել Կարավէլովին, որպէսզի նա ազգային ժողովի նստաշրջանը փակվելուց յետոյ գնայ արտասահմանեան որևէ կուրորտ հանգստանալու և բժշկվելու համար։ Սակայն նիստի հէնց վերջում եկան այնտեղ և յայտնեցին Կարավէլովի մահվան լուրը։ Պէտկո Կարավէլովի մահվան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքում։ Հետեւեալ օրը արդէն ամբողջ Բոլգարիան ողբում էր իր աչքի ընկնող ժողովրդական պարագլխի վաղաժամ մահը։ Հանգուցեալի տան առաջ խմբվել էր ժողովրդի ահագին բազմութիւն, որ եկել էր հրաժեշտ տալու հանգուցեալին և իր սրտագին ցաւակցութիւնը յայտնելու Կավավէլովի որբացեալ ընտանիքին։ Ազգային ժողովում պատգամաւորները արտասուախառն աչքերով լսեցին յոտնկայս ազգային ժողովի նախագահ Դրագան Ցանկովի և մինիստր նախագահ դոկտոր Դանէվի հաղորդութիւնը մեծ հայրենասէր Կարավէլովի մահվան մասին և միաձայն ընդունեցին կառավարութեան հետեւեալ առաջարկութիւնը. թոչակ նշանակել որբացեալ ընտանիքին. թաղել հանգուցեալին պետական հաշուով, և, ի նշան համազգային սուգի, փակել ազգային ժողովի նիստը։ Իշխանը ուղարկեց հանգուցեալի այրիին ինքնագիր նամակ։ Զինուորական մինիստրութիւնը վճռեց զինուորական պատիւներ տալ Կարավէլովի թաղման ժամանակ այն պատճառով, որ հանգուցեալը ոչ միայն մի ժամանակ իշխանութեան խնամակալ էր, այլ և բոլգարական զինուորական I աստիճանի չքանչանի ասպետ էր, որ նա ստացել էր սերբ-բոլգարական պատերազմի ժամանակ։

—«Petit Parisien» լրագիրը հաւատացնում է, որ Ժօրէս պահանջել է նշանակել պարլամենտական մասնաժողով՝ բաղկացած 39 հոգուց՝ Դրէյֆուսի գործը քննելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 փետրվարի

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բանէրման բացատրութիւններ է խնդրում չաքարային դաշնադրութեան մասին։ Բալֆուր պատասխանում է, թէ կառավարութեան կարծիքով, այդ դաշնադրութիւնը չէ չօշափում ամենից շատ արտօնված ազգերի սկզբունքը։ Ռուսաստանը ուրիշ կարծիքի էր, այս պատճառով Անգլիան նրան առաջարկեց հրաժարվել առևտրական դաշնագրից։ Ռուսաց կառավարութիւնը յայտարարում է այժմ, թէ մնում է առանձին կարծիքի և նայում է այդ հարցի վրա՝ իբրև ակադեմիական հարցի վրա։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Պրինց Կօմատսու վախճանվեց։

ՊՈՒԷՏՐՈ-ԿԱՎԷԼԼՕ։ Շէդէր նաւամատոյցը փետրվարի 2-ին վերադարձրեց տէրերին վէնեցուէլական 15 ձկնորսական մակոյկներ, որոնց բռնել էր։

ՄԱԴՐԻԴ։ Սպանիական դեսպանը Տանժէրում հաղորդում է, թէ Ֆէցից 70 քիլոմէտր հեռաւորութեան վրա տեղի ունեցաւ կռիւ, որ, ինչպէս ենթադրում են, սուլթանի համար նպաստաւոր կերպով վերջացաւ։

ՖԷՑ։ Զինուորական մինիստրութեան բանակը ջարդեց էվլադներին, ջաֆարներին և խիայնների ցեղի մի մասը։ Սպանվածներ և վիրաւորվածներ շատ կան։ Սպանվածների գլուխները ուղարկած են այստեղ՝ բազմաթիւ գերիների հետ միասին. բայց թեկնածուի չքախմբի մասին խօսք չը կայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոցա Մեծութիւնները այցելեցին «ժամանակակից արուեստի» ցուցահանդէսը։

7 փետրվարի

ԽԱՐԿՕՎ։ Քննվում են առևտրական բանկի յանցագործութիւնները։ Ենթադրվում է թէ փետրվարի 7-ին կը վերջանայ վկաների հարցափորձը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ուղղթի մասին վիճաբանութեան ժամանակ Վալլօն մատնացոյց է ուղղագրութիւն, որով առաջարկում է կառավարութեան՝ իրական միջոցներ ձեռք

առնել Անգլիայի առևտրական և քաղաքային շահերը ընդլայնելու համար Չինաստանում և Պարսկաստանում և Ռուսաստանի հետ մրցութեան մէջ մտնել Պարսկաստանում։ Բօուլսի հարցին, թէ ինչ արաւ կառավարութիւնը ռուս-պարսկական առևտրական դաշնագրի նկատմամբ և ինչ է ձեռնարկված բրիտանական-հնդկական առևտուրը Պարսկաստանի հետ պաշտպանելու համար՝—Կրանբօրն պատասխանեց, թէ անգլիական քաղաքականութիւնը Պարսկաստանում անփոփոխ կը մնայ. չը կայ ոչ մի հիմք ենթադրելու, թէ Անգլիայի և Ռուսաստանի շահերը Միջին Ասիայում միմեանց կընդհարվեն։ Անգլիայի և Ռուսաստանի համար կայ բաւական լայն ասպարէզ՝ որպէսզի իրանց բոլոր ոյժերի օգնութեամբ և զանազան միջոցներով կարողանան հասնել այն նպատակներին՝ որոնց ձգտում են։ Այն յայտագրերով, որ փոխանակեցին միմեանց մէջ Անգլիան և Ռուսաստանը՝ ճանաչված են Պարսկաստանի անձեռնմխելիութիւնը, և Ռուսաստանը երբէք փորձ չէ արել կասկած յարուցանել այս որոշմունքի դէմ։ Պարսկաստանում Անգլիան հետևում է իր առևտուրը ընդարձակելու քաղաքականութեան։ Ինքը կասկած ունի, որ ռուս-պարսկական նոր առևտրական դաշնագիրը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ բրիտանական առևտրին Պարսկաստանում։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը բօյգարական կառավարութեան, իսկ սուլթանը անձամբ Ֆէրդինանդ իշխանին շնորհակալութիւն յայտնեցին մակեդոնական կոմիտէտի դէմ ձեռք առած միջոցների համար։

ՀՌՕՄ։ Իտալական Մարասպինա դեսպանը օսմանեան պետութեան մօտ՝ ստացաւ առաջարկութիւն՝ պաշտպանել աւստրօ-ունգարական և ռուսական դեսպաններին, որոնք միաժամանակ առաջադրութիւններ են անելու Բ. Դռանը՝ մակեդոնական նահանգներում իսկապէս ռէֆօրմներ մտցնելու մասին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Տեղի ունեցաւ մինիստր Ֆէյէրվարրիի և պատգամաւոր Լէնգիէլի միջև։ Մինիստրը պալատում բարձրաձայն ասել էր Լէնգիէլին. «դուք սուտ էք խօսում», որի համար և կարդի էր հրաւիրվել Մինիստրը թեթև վէրք ստացաւ աջ թևին։

ՍՕՖԻԱ։ Երկու օր տևող վիճաբանութիւններից յետոյ ազգային ժողովը զգալի մեծամասնութեամբ հաւանութիւն յայտնեց մակեդոնական կոմիտէտի դէմ ձեռք առած միջոցներին և վստահութիւն յայտնեց կառավարութեան։

ՎԻԵՆՆԱ։ Երկարատև վիճաբանութիւնների յետոյ, երկրորդ ընթերցանութեան ժամանակ, 217 ձայնով 108-ի դէմ ընդունվեց նորակոչների թիւը աւելացնելու օրինագիծը։ 213 ձայնով 109-ի դէմ մերժված է փոքրամասնութեան առաջարկութիւնը՝ նորակոչների ներկայ թիւը պահելու մասին, որ մտցրել էր սոցիալ-դեմոկրատ Շուսմախէրը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄԻ ԵՒ ԲԵՐԱՆԻ ԽՈՒՌՈՁԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԲԺ. Ն. Ա. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ Սերգիեվսկայա փող., տուն Կորգանեանի № 14։ Ընդունում է հիւանդներին առաւօտեան 9—1 ժ.։ Երեկոյեան 5—7 ժամ։ 2—5

ԲԺՇԿԱԳԵՑ

ԳՐ. ԻՎ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ներքին և երեխաների հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10-ից մինչև 11-ը և 5-ից մինչև 7 ժամ երեկոյեան։ Միխայլովսկի պրոսպէկտ 154։ Տէլէֆոն 825։ 25—30

ՀԱՐԱՒՈՏՅԻՆ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻ

ՊԱՐՍԻՑ ԾՈՅԻ ՁԷԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առևտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchier Persian-Gulf. 79—100

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

Թիֆլիսի Հակա-ալկոհոլական ընկերութեան Հալաբարի բաժանմունք

ՄՈՒՐԱՇԿՕՑԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ

(Թելաւեան փող., անցքը Պետր-Պաւլեան հրապարակից)

Կիրակի, փետրվարի 9-ին

(Ցերեկով)

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Բարեհաճ մասնակցութեամբ տիկին Զաբէլի և պ. Սմօ-Խարազեանի

Կը ներկայացնէ

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ

Պատմ. դրամա 5 գործ. 6 պատկերով հեղ. Գունիայի, թարգմ. Դ. Տէր-Դաւթեանի։

Մասնակցում են.—Տիկ. Զաբէլ, պ.պ. Սմօ-Խարազեան, Բերինեան, Բաբայեան, Գուլազեան, Գրիգորեան, Սափարեան, Փիրումեան և ուրիշները։

Սկիզբն է 12 ժամին ցերեկվայ.

Տոմսակների գները 10-ից մինչև 90 կոպէկ։

1—2 Ռէժիսոր Սմօ-Խարազեան

ՀՐԱՒԷՐ

Առաջիկայ փետրվարի 9-ին կիրակի առաւօտեան 12 ժամին, ս. պատարագից յետոյ, Նորաշէնի Սբ. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխական վերջին ժողով, լսելու մասնաժողովի զեկուցումը հանգուցեալ գրիգոր Իշմիրեանի կտակած, Վիեննի փողոցում գտնվող տան մասին։ Ուստի յարգոյաբար խնդրում եմ մեծ. պ. պ. ծխականներին բարեհաճել շնորհ բերել յիշեալ եկեղեցին որոշեալ ժամին։

Նախագահ՝ Սարգիս քահ. Շիրոյեանց

ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Երկուշաբթի, փետրվարի 10-ին,

Հայոց Դրամատիկական ընկերութեան խումբը Մասնակցութեամբ տիկ. տիկ. ՍԻՐԱՆՈՇԻ, Ս. ՁՄՇԿԵԱՆԻ և պ. ՄԻՐԱՂԵԱՆԻ

ի նպաստ խմբի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՅԺԵՐԻ

Կը ներկայացնէ

ՀԱՄԼԷՏ

ԻՇԽԱՆ ԴԱՆՆԷՄԱՐԿԱՑԻ

Ողբերգ. 5 գործող. 10 պատկ. հեղ. Վ. Շէքսպիրի, թարգմ. Յովհ. Խան-Մասէհեանի։

Համլէտի դերը կը կատարէ տ. ՍԻՐԱՆՈՅՇ

Մասնակցում է ամբողջ խումբը։

Տեղերի գինը բէնէֆիսային է։ Սկիզբն է ուղիղ 8 ժամին երեկոյեան

Տոմսակները կարելի է ստանալ թատրոնի կասսայում։ 2—2

Կը յայտարարենք ԲԱԶՄԱՎԷՊԻ բաժանորդաց որ 1902ի մեր թերթին ամէն պրակները ճշտութեամբ եւ ճիշտ ժամանակին յղած ենք ամէն բաժանորդաց, և երբեմն նոյն իսկ կրկին. սակայն ինչ որ կերեւի բաժանորդներին ոմանք մէկ քանի պրակ չեն ստացած. ցանկանք իրենց ձեռքը հասցնելու համար խմբագրութիւնս Ռուս եւ Իտալ. պետական Մասուլի Մինիստրներուն դիմում ըրած է, և գոհացուցիչ պատասխան առած է ու կարգադրութիւնը ապահովուած։

Խմբ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, փետրվարի 9-ին

Հայ թատերասէրների խումբը կը տայ իր վերջին հրաժեշտի ներկայացումն

ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ

Պատմ. դրամա 4 գործ. փոխ. Սարդարեանի։

Մասնակցում են.—Օր.օր. Զմշկեան, Օհանեան, պ.պ. Համբարձումեան, Ազեան, Ադէլխանեան, Աբրահամեան, Երուանդեան, Մամուլեան, Խօջաթումանեան, Տէր-Գրիգորեան և ուրիշները։

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան

Ռէժիսոր Արաքսեան

Ներկայացումից յետոյ ՊԱՐՆՐ։ 2—2

ԲԹԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վենէրիական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բեբուտովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 54—150

ԻԻԶԲԱՇԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

(Բագու. Ստանիսլավսկայա և Բօնդարնայա փողոցների անկիւն, տուն Աշուրովի, Տեխնիկական ուսումնարանի նոր շինութեան հանդէպ)։

Սովորեցնում է երեխաներին սկզբնական դրագիտութիւն հնչական մեթոդով։ Պատրաստում է պետական բոլոր միջնակարգ դպրոցների երեք դասարանների համար։ Առանձնում են և հայոց լեզուի դասեր։ (Չ. Չ.) 6—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

ԴՕԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այն եւ այլն։ Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19. 23—24

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ՆԱԳԷԺԴԱ“

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը . . . . . 1,650,000 ռուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

Ի. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտանետ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրեով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱԽԱԳՆԱՑ ԻՐԵՐԻՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Բիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ш. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի, պրոսպէկտի վրա, № 10-րդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագուում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Տելեֆոն № 108 (Ե. ա. Կ.) 36—120

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ունենալ ՎԱՐՇԱՎԱՑԻ հետ, որ ես վաղուց արդէն վերաբնակված լինելով Վարշավայում, լանձն եմ առնում եւ կատարում եմ ամենայն տեսակ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ իմ բազմամեայ հմտութեամբ առեւտրական ասպարէզում օգտաւէտ կարող եմ լինել ինձ դիմող վաճառականներին, որոնց խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցէով.

ВАРШАВА. Медовая 17, кв. 33. Минасу Яргулову. (Կ. Հ.) 45—50

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն առդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշուապահութիւն։

2) Առեւտրական թուաբանութիւն։

3) Առեւտրական թղթակցութիւն։

4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։

5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենավառ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1903 թւի Յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, Ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստաններ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ (Ի. Ե. Հ.) 24—25

Дозволено Цензурою. Тифлисъ, 7 Февраля 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванская ул.